

նայիք» : Յովհաննէս եպօ . Վըրգպուրկի 1165 ին մի-
եւնոյն յիշատակին վրայ կը խօսի . բայց երբ կարելի
չէ թոյլատրութիւնը քրիստոնեաներու յաճախել մըզ-
կիթի վերածուած նոյն սրբավայրը , երկու հրեշտակ-
ներուն երեւումը կը պատուէին մերձակայ բլուրին
վրայ , և հոն կը դնեն սիւնի երկու կտորներ՝ որ տա-
կաւին կը տեսնուին :

1881 ին Karm es Sayad ի բլուրի պեղումներուն ըն-
թացքին գտնուած են սիւնի կտորներ , հրէական եւ
քրիստոնէական գերեզմաններ (Bar. gd. էջ 187) : Յիշ-
եալ տեղը շահագրգռական եղած է նաև երկու պատ-
ճառներով . առաջին՝ Երուսաղէմի պաշարման ժամա-
նակ (70 ին) հռովմէական տասներորդ լեգէոնին բանա-
կատեղին եղած է : Գտնուած են հոն հռովմէական
կղմինտրներ՝ որ կը կրեն Leg. X Fr. լեգէոնական զը-
րոշմը : Երկրորդ՝ գտնուած են նաև նախկին քրիստո-
նէական գեանադամբաններ (Han. W. էջ 45-46) :

2. Համբարձման բլուրը . — Ս . Դուկաս իր Աւե-
տարանին մէջ (ԻՊ . 50) կ'ըսէ թէ Յիսուս իր աշա-
կերտները տարաւ քաղաքէն դուրս , « դէպի Բեթա-
նիա » , եւ զանոնք օրհնելով երկինք համբարձաւ :
Գործք Առաքելոցին մէջ (Ս . 12) կը պատմուի թէ
« այս դէպքէն յետոյ Առաքեալները մեկնեցան Ձիթե-
նեաց լեռնէն » որ Երուսաղէմէն հեռու է ըստ շաբա-
թու ճանապարհի , և վերադարձան Երուսաղէմ » : Եւ-
սեբիոս Կեսարացին եւ Երուսաղէմի քրիստոնեաները
այս դէպքին տեղը ցոյց կուտան Ձիթենեաց լեռան
կեդրոնական բլուրին վրայ :

3. Համբարձման Սրբավայրը . — Ս . Հեղինէ Ձի-
թենեաց լեռան վրայ հրամայեց կանգնել եկեղեցի մը՝